## Հիմնավորում

### Նախագծի ընդունման հիմնավորումը

Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:»
Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն՝
« 1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:
2. Նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:»

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ ներկայումս առկա նվազագույն աշխատավարձի չափը չի լուծում աշխատողների սոցիալական բոլոր խնդիրները: Այն շատ դեպքերում համարժեք չէ աշխատողի կողմից ներդրված ջանքերին: Հարկ է նշել, որ ներկայիս նվազագույն աշխատավարձի չափը չի համապատասխանում նաև Հայաստանում հաշվարկված սպառողական զամբյուղին և սպառողական գների ինդեքսի աճին:

«Այսպիսով, ստանալով 68000 դրամ աշխատավարձ, քաղաքացին ի զորու չէ հոգալ իր ամենապարզունակ կարիքները: Իսկ եթե հաշվի առնենք այն փաստը, որ շատ դեպքերում ընտանիքի անդամներից աշխատանք ունի միայն մեկը, առաջ է գալիս գոյատեւելու խնդիրը: Հիմա անգամ ֆիզիկական աշխատանքով զբաղված մարդկանց աշխատավարձը հաշվվում է միջինը 5000 դրամ օրական: Սա յուրօրինակ ցուցիչ է Հայաստանում ձեւավորվող աշխատանք-վարձատրություն համակարգում: Կարծում ենք, որ նվազագույն աշխատավարձը աստիճանաբար պետք է բարձրանա մինչեւ ամսական 150.000 դրամ մի քանի տարվա ընթացքում: Սա նաև կխթանի աշխատելու շարժառիթը և պատասխանատվությունը[1]:»

Այս մեջբերումն արձանագրված է 19.11.2019թ ընդունված ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» այս իշխող քաղաքական ուժի ներկայացրած օրենքի հիմնավորման մեջ:

Իմիջայլոց՝ նույն օրենքի հիմնավորման մեջ նշված է նաև. «ինչպես և ցանկացած տնտեսական բարեփոխում, սույն փոփոխությունները հղի են մի շարք հնարավոր վտանգներով. չձևակերպված զբաղվածություն, սպառողական գների, բյուջետային ծախսերի, բիզնեսի վրա հարկային բեռի աճ, սակայն փոփոխությունների արդյունքում ծագած հնարավոր վտանգները մեծ ազդեցություն չեն ունենա տնտեսության վրա, քանզի ակնկալվող դրական տեղաշարժն ավելի էական է:»:

Սույն նախագծով առաջարկվում է նվազագույն աշխատավարձը դարձնել 80000 ՀՀ դրամ, ինչպես նաև ավելացնել գործավարձով եւ ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը:

Այս օրենսդրական առաջարկի հիմքում դրված են մի շարք տնտեսական հիմնավորումներ, մասնավորապես՝ 2022թ հունվարի 1-ից խմելու ջրի 1 խ/մ-ի գինը թանկացել է 20,47 դրամով: 2022թ փետրվարի 1-ից Էլեկտրաէներգիան նույնպես թանկացել է. ամսական մինչև 200 կՎտ/ժ էլեկտրաէներգիա սպառող ընտանիքների համար սակագինը թանկացել է 2.5

[1] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10483&Reading=0

դրամով՝ կազմելով ցերեկայինը՝ 46.48, գիշերայինը՝ 36.48 դրամ, 201-400 կՎտ/ժ սպառողների համար թանկացումը կազմել է 4 (ցերեկայինը՝ 48.48, գիշերայինը՝ 38.48 դրամ), 400 կՎտ/ժ–ից ավել էլեկտրաէներգիա սպառողների համար էլեկտրաէներգիան թանկացել է 10 դրամով (ցերեկայինը՝ 53.48, գիշերայինը՝43.48 դրամ): Ակնկալվում է նաև գազի թանկացում:

Արդեն տարվա վերջում՝ համավարակով ու հետպատերազմական խնդիրներով ուղեկցված 2021 թվականի ամփոփ տվյալներով՝ Հայաստանում 12-ամսյա գնաճը 7,2 տոկոս է կազմել: Սա վերջին տասը տարիներին գրանցված ամենաբարձր ցուցանիշն է, գնաճը վերջին անգամ պետության սահմանած թիրախային 4 տոկոսի սահմանն անցել է միայն 2014թ-ին:
Անցած տարվա ընթացքում միայն սննդամթերքի գնաճը որոշ ամիսներին անցնում էր 17 տոկոսից: Գրեթե այդչափ ավելացել են հագուստի գները: Սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների գնաճը կազմել է 12,9 %, այդ թվում՝ բանջարեղենի ապրանքախմբում գնաճը կազմել է 40%, շաքարի և շաքարավազի ապրանքախմբում՝ 19.8%, հացաբուլկեղենի և ձավարեղենի ապրանքախմբում՝ 10.2%, կաթնամթերքի, պանրի և ձվի ապրանքախմբում՝ 11.2%, մսամթերքի ապրանքախմբում՝ 7.5%: Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2021թ.-ի դեկտեմբերի գնաճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 14.7%, ձկան և ծովամթերքի ապրանքախմբում՝ 31.4%:

Հարկ է նշել, որ աշխատավարձի ինդեքսավորման իրավական մեխանիզմի բացակայության դեպքում գնաճը էլ ավելի է բարդացնում COVID-19-ի և 44-օրյա պատերազմի արդյունքում ծայրահեղ ծանր վիճակում գտնվող մեր հայրենակիցների համար իրենց ամսական կարիքների պատճաշ կերպով հոգալու հնարավորությունը:

Ներկայացված գնաճի պայմաններում քաղաքացիների արժանապատիվ կյանքը և աշխատավարձը ապահովելու համար առաջարկվում է բարձրացնել նվազագույն աշխատավարձը՝ այն առնվազն դարձնելով 80000 ՀՀ դրամ:

Նախագծի ընդունումը իր հերթին կհանգեցնի նաև ոչ ֆորմալ աշխատողներին հարկային դաշտ բերելուն, ինչն էլ որոշակիորեն կնպաստի ստվերային գործունեության դեմ պայքարին:[2]

Հայաստանի գործատուների միության՝ ՀՀ-ում ոչ ֆորմալ տնտեսության վերաբերյալ 2021թ. զեկույցում, ի թիվս այլոց, նշված է նաև նվազագույն աշխատավարձի ցածր լինելը որպես ֆորմալացման հիմնախնդիր, քանի որ նման աշխատավարձի պայմաններում քաղաքացիները համեմատության մեջ նախընտրում են չգրանցված աշխատանքը, որն ապահովում է ավելի բարձր եկամուտ:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքում վերջիններս նշել են, որ կիսում են նախագծով հայտնված տեսակետը, և անհրաժեշտ է նվազագույն աշխատավարձի բարձրացումը (ինդեքսավորումը):

Հարկ է նշել, որ թեև նախագիծը իրենից ենթադրում է ծախսերի ավելացում, սակայն աշխատավարձի բարձրացված մասը՝ 12000 ՀՀ դրամը, ծախսերի և դրանց արդյունքում ձևավորվող հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների միջոցով կրկին վերադառնալու է պետական բյուջե:

Բացի այդ, Նվազագույն աշխատավարձի բարձրացման անհրաժեշտության մասին է վկայում նաև առաջանցիկ գնաճը, որի հետևանքով 2021թ-ին սպառողական զամբյուղի արժեքը (71571) դրամ գերազանցել է նվազագույն աշխատավարձի չափը:

Հարկ է նաև նշել, որ վերանայված սոցիալական խարտիայի նախադեպային վերլուծությունների ամփոփագրում նվազագույն և միջին աշխատավարձների

[2] https://www.employers.am/publications/informality-in-armenia

հարաբերկացությունը սահմանված է 60%՝ որպես ցանկալի նպատակ, ընդունելի՝ 50% և 40%՝ որպես նվազագույն չափ: Այս առնչությամբ նշենք, որ 2021թ դեկտեմբերի միջին աշխատավարձը կազմել է 255663 դրամ, որի 40%-ը 102000 դրամն է, իսկ 2021թ հունվար-դեկտեմբերին միջին աշխատավարձը կազմել է 204048 դրամ, որի 40%-ը կազմում է 82000 դրամ:

Հաշվի առնելով նաև նախագծի ընդունման դեպքում ակնկալվող ծախսերի մեծացումը, նախատեսվել է դրա ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ՝ 2023թ. հունվարի 1-ը:

**Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման դեպքում՝

1. Նվազագույն աշխատավարձը կգերազանցի սպառողական զամբյուղի արժեքը՝ լուծելով սոցիալական կարեւորագույն խնդիր:

2. Նվազագույն աշխատավարձի աճով կբարձրանա նաև միջին աշխատավարձը:

3. Նվազագույն աշխատավարձ ստացող քաղաքացիներն ավելի գնողունակ կդառնան, ինչը կհանգեցնի պահանջարկի աճին, որն էլ իր հերթին կբերի առաջարկի աճին:

4. Կկրճատվի աշխատավարձերի ոլորտում մասնավոր եւ պետական հատվածների տարբերությունը:

5. Ավելին վճարելու պատրաստակամության պարագայում գործատուն հնարավորություն կունենա աշխատանքի ընդունել ավելի բարձր որակավորմամբ մասնագետների:

6. Կձեւավորվի մրցակցություն նաև գործատուների միջեւ, որոնք կպայքարեն հմուտ կադրերի համար, այդ մրցակցության արդյունքում կաճեն աշխատավարձերը:

7. Լուծվելու է ներդրված ջանքի եւ ստացված աշխատավարձի համարժեքության խնդիրը: